ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ
ԿԱՊԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտի 1, հեռ. +(374 11) 514-240

№ Պ/ 0169 23 նոյեմբերի 2016թ.

Հարգելի Լիանա Դոյդոյան

Ի պատասխան Երևանի քաղաքապետարանին հասցեագրված Ձեր հարցման տեղեկացնում ենք, որ 2016 թվականի հունվարի 1-ից մինչև հոկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում՝ ամսական և եռամսյակային պարբերականությամբ, ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի համաձայն, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակիցների կողմից իրենց աշխատանքային և ծառայողական պարտականությունները բարեխիղճ և պատշաճ կատարելու հանգամանքը, ինչպես նաև լրացուցիչ աշխատանքային ծանրաբեռնվածությամբ պայմանավորված Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության գլխավոր, առաջատար և կրտսեր խմբերում պաշտոններ զբաղեցնող թվով 179 աշխատակիցներ ստացել են դրամական պարգևատրումներ ընդհանուր 158,189.2 հազ. ՀՀ դրամի չափով:

Միաժամանակ տեղեկացվում է, որ նշված ժամանակահատվածում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմում նվերների տեսքով պարգևատրումներ չեն տրվել: